պատարագն, զոր առնել հրամայեաց, և զայլ արարողութիւնս ոմանս կացոյց. վասն որոյ քահանայք և դատաւորքն այսու դժուարեալք, զգանգատանս գրեցին առ Բիկնադելլի նունցիոսն փափին, որ յետոյ փափ եղեւ անուամբ Ինոչենցիոս ԺԲ։ Որոց պատասխանէ նունցիոսն, 1666, սեպտեմ. 6. զարմանալով, թէ զիարդ դժուարին զՀուրն ի պատարագին ընդ գինւոյ խառնել, գոլով այս հաստատ սովորութիւն ի մէջ ամենայն ուղղափառաց, և ի ժողովոց իբր հարկաւոր սահմանեալ, և այլն։ Գրէ նոյն նունցիոսն յամի 1667, յունուարի 3, և առ Նիկողայոս, զի զգանձն և զարդն եկեղեցւոյ՝ թոյլ տացէ պահել դատաւորացն, ըստ հին սովորութեանն, և մի՛ պահանջեսցէ ի նոցանէ զկելուր, այլ շատասցի պարգեւաք նոցին ըստ երախտեաց, զորոց գանգատեալք էին Կամէնցացիքն։

1666. ՌՃԺԵ. Կղեմէս Կալանոսն իտալիացի ի կարգէն Թէադինոսաց, աստուածաբանութեան և Հայոց վարդապետ... միսիոնար գոլով ընդ Հայաստան և ընդ Վիրս զամս 25, այնքան կատարելապէս ուսաւ զքերականութիւնն, զբովանդակ փիլիսոփայութիւնն, և այլն. ի Հայաստանեայց դարձեալ ի Հռոմ, ուսոյց անդէն ի դպրատանն մերում զփիլիսոփայութիւն և զաստուածաբանութիւն՝ Հայոց արեւելականաց։ Անտի ի Լէօպոլիս եկեալ՝ զնոյնս արար. յորոց բազում ընտիր վարդապետք ելին՝ հայրապետական դպրատանն. ուր անխոնջելի աշխատութեամբ կեցեալ՝ հանգեաւ ի Քրիստոս, յայսմ ամի, և թաղեցաւ ի մերումս աթոռակալ եկեղեցւոջն, ամաց..։ Սա մինչ էր ի Հայաստան՝ զզգեստ և (զձեւ) Հայոց արեւելայի կրէր, յաւուրս պահոց զձուկն ոչ ուտէր, զգինի ոչ ճաշակէր, թէպէտ վտիտ էր մարմնով. զգիշերային ժամսն, զսաղմոս և զայլն՝ ի միասին կատարէր. ըստ այնմ, « Ընդ ամենեսեան ամենայն եղէ, զի զամենեսեան շահեցայց։ »

1668. ՌՃԺԷ. Նիկողայոս արքեպիսկոպոսն վերստին գայ ի Կամէնից, և զգովելի կարգաւորութիւնս եկեղեցականս առնէ յայսմ ամի, մայիսի 29, ի կէտս 19. ի մէջ որոց են, զի քահանայն որ մկրտէ՝ մի անգամ ասասցէ Ես մկրտեմ յանուն Հօր, և այլն. — զի զՎերջին օծումն տացեն հիւանդաց. — զգրեանս մկրտելոց, ամուսնացելոց և մեռելոց՝ ունիցին. — զհերետիկոսական գիրք՝ մի՛ ոք իշխեսցէ գնել կամ վաճառել։ — Մի՛ ոք ի քահանայից իշխեսցէ վասն բազմաց զպատարագիս տուողաց՝ զմի միայն պատարագ մատուցանել, այլ այնքանս՝ որքան են տուողք։ — Զտօնս Ընծայման և Անարատ Յղութեան Աստուածածնին և Ամենայն Սրբոց՝ հանդիսիւ կատարել։ Եւ զայս ամենայն ընդ պատժովք նզովից իսկոյն անկելոց՝ սահմանադրեաց։

Յետ այսոցիկ կոչի ի Ս. Ժողովոյն՝ ի Հռոմ. զի մի՛ զկնի մահուան նորա (քանզի էին այժմ 42 ամք եպիսկոպոսութեան նորա, և կենաց 72), Հայք ի կաթողիկոսաց առեալք զեպիսկոպոս, դարձցին յառաջին հերձուածն։